# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

### *Հայրապետական հրամանք.*

*Կոնդակ Ցանուն Սինոդին, որով պատուիրեցաւ տալ նորոգել գործունս արտաքին հին սենեկաց միաբանութեան. Թ.* 925։

*— Ցանուն վիճ. Կոնսիստորիային Վրաստանի, որով յայտնեցաւ թէ չէ մարթ հեռացուցանել դքահանայ ոք ի եկեղեցւոջէ յայլ տեղի. Թ.* 926։

*— Ցանուն վիճ. Կոնսիստորիային Շամախւոյ, որով պատուիրեցաւ տալ միանուագ Տ. Մեսրոբ վարդապետի* 200 *ռ. և Տ. Տաճատ քահանայի* 200 *ռ. ի տարին՝ ի հազար հինգ հարիւր րուբլեաց եկելոց յեկեղեցեաց Բագուայ. Թ.* 956։

*—Ցանուն Հոգ. Կառավարութեան Նուխւոյ, որով վաւերական համարեցաւ պսակն Նուխեցի Յովհաննիսի Քոչարեանց ընդ Զանազանայ Զաքարեանց. Թ.* 989։

*— Ցանուն Եկեղ. խորհրդոյ Ս. Պետերբուրգի, յաղագս բարեկարգելոյ յայսմ ամի և ուսանող Իգնատիոսի Իփէքչեան. Թ.* 1000։

*—Ցանուն Տ. Բենիկ վարդապետի, որով հաստատեցաւ ի տեսուչ թեմակ. դպրանոցին Երևանայ. Թ.* 1006։

*— Ցանուն Հոգաբարձութեան թեմակ. Հոգ. դպրանոցին Երևանայ, որով ծանուցաւ հաստատութիւն Բենիկ վարդապետի ի տեսուչ դպրանոցին. Թ.* 1007։

### *Հայրապետական պարգևք.*

*Կոնդակ յանուն Իսահակ վարդապետի Տ. Միքայէլեան, որով շնորհեցաւ նշան սև ծաղկեայ փիլոն. Թ.* 932։

### *Արժանացողք Հայրապետական Օրհնութեանց և Գովութեանց.*

*Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Միքէնայ Գասպարեան վասն նուիրաբերութեան նորա մի պատուական ջերմաչափի. Թ.* 1001։

*— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Աղաւելի Յովսէփեան Ռաշտեցւոյ, յաղագս շինելոյ նորա իւրով ծախիւք օրդպրոցի Ռաշտ քաղաքի. Թ.* 1003։

### *Ցաւակցութիւն.*

*Կոնդակ ցաւակցական յանուն Ամեն. պատրիարքին Կ. Պօլսոյ յաղագս մահուն Գրիգորիս եպիսկոպոսի Ալէաթճեան և Սարգիս արքեպիսկոպոսի Տ. Գասպարեան. Թ.* 1005։

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

*Յունիս* 4. *—Երևանի Կոնսիստորիային պատուիրւում է կարգադրել նորոգելու Ալահի գիւղի եկեղեցին, որի համար պէտք է ծախսուի նուէր ստացուած* 500 *ռուբլի և եկեղեցապատկան* 500 *ռ.։*

*Յուն.* 4. *—Երևանի Կոնսիստորիայի ցուցմամբ Սինոդը որոշեց Ալէքսանդրապոլի Մկրտիչ քահանային ուղարկել նոյն թեմի վանքերից մէկն ժամանակեայ բնակութեան համար՝ մինչև կապաշխարէ իւր գործած զեղծումները. իսկ նորա ծուխը յանձնել մի ուրիշ քահանայի, քահանայական արդիւնքների կէսը հասցնելով նրան վանահօր ձեռքով։*